ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն(ներ)ը, Ազգանուն(ներ)ը

Լուսինե Առաքելյան

2. Զբաղեցրած Պաշտոն(ներ)ը

ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

3. Գործուղման Վայրը և Ժամկետները

2019թ մայիսի 20-ից 21-ը Լիտվայի Հանրապետություն

4. Հրավիրող Կողմը

Բաց հասարակության հիմնադրամի կրթության աջակցության ծրագիր

5.Գործուղման նպատակը (Աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Լիտվայի Հանրապետությունում կայանալիք կրթության առանձնահատուկ պայման-ների կարիքի գնահատման և աջակցման միջազգային մակարդակի համագումարին մասնակցելը:

6. Քննարկված Թեմաներ

- Լիտվայի Հանրապետությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման և աջակցման ծառայությունների կառուցվածքն ու բովանդակությունը
- Ներառական կրթության բարեփոխումների իրականացման համատեքստում, Արևելյան Գործընկերության հիմնական ձեռքբերումները
- Հատուկ դպրոցների վերակազմակերպման անհրաժեշտությունը հոգեբանամանկավարժական աջակցության կենտրոնների

- ՆԿ կարողությունների զարգացման, գիտելիքի և փորձի ընդլայնման և ՆԿ իրականացման ոլորտում առաջավոր փորձ ունեցող երկրների համապատասխան մասնագետների և պաշտոնյաների փորձի փոխանակումը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

- Տեղի ունեցան հանդիպում-ծանոթություն կառույցի աշխատակիցների հետ ու քննարկվեցին մի քանի թեմաներ՝ կրթական համակարգի, համընդհանուր ներառականության, անցման ճանապարհային քարտեզի մասին:
- Իրականացավ այց աջակցման կենտրոններից մեկի հետ եւ ծանոթություն նրա ղեկավարության ու գործունեության հետ:
- Կազմակերպվեց այց Վիլնյուսի «Հանճար» գիմնազիա, մանկապարտեզներ ու դպրոցներ:
- Հաշվի առնելով, որ ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունը գտնվում է մինչեւ 2023 թվականը համընդհանուր ներառականության անցնելու փուլում, ինչպես նաև՝ կրթական չափորոշչի վերանայման փուլում՝ կազմակերպված այցերի ու քննարկումների շրջանակներում Լիտվայի Հանրապետության կրթական համակարգի, մասնավորապես, ներառական կրթության մասով, դասագրքերի եւ ուսումնական պլանի, ուսուցիչ-աշակերտ-ծնող կապի մասով փորձի փոխանակման ձեռքբերումը կարևոր դեր է խաղալու ՀՀ ԿԳ նախարարության համար: Ուսումնական հաստատություններ այցերի ու Լիտվայի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարությունում տեղի ունեցած արդյունավետ քննարկումների շնորհիվ այդ օրինակները հնարավոր կլինի համադրել ՀՀ-ի կրթական համակարգի ներկայիս իրավիճակի հետ եւ փորձել դրանք կիրառելի դարձնել մեզ համար:

8. Սպորագրությունը, ամսաթիվը

29.05.2019